

1943 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ԸԻՄՆԱԴՐՎԵՑ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ



ՀՀ ԳԱԱ կազմավորման 80-ամյակի կապակցությամբ հրատարակվել են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա-80» հայերեն, ռուսերեն և անգլերեն պատկերազարդ ժողովածուները, որոնցում սեղմ լուսաբանվում են ԳԱԱ համակարգի

ինստիտուտների և կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղությունները և վերջին տասնամյակում ձեռք բերված արդյունքները: Ընթերցողին ենք ներկայացնում հատվածներ ժողովածուի հայերեն տարբերակից՝ ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սարգսյանի ներածական խոսքը, պատմական համառոտ ակնարկը, ԳԱԱ կառուցվածքը և մի շարք լուսանկարներ:

Ներածական խոսք

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան մեր բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովրդի ձեռք բերած անմախաղեպ ավանդույններից է և խորհրդանշում է գիտության ու մշակույթի՝ որպես առաջընթացի գրավականի ու գոյապահպանման զորեղ միջոցի հանդեպ մեր հոգածությունն ու ակնածանքը:

Գոյության 80 տարիների ընթացքում ԳԱԱ-ն հսկայական ավանդ է ունեցել խՍՀՄ և ՀՀ գիտատեխնոլոգիական առաջընթացի, տնտեսության զարգացման, պաշտպանության ամրապնդման, առա-

ջադեմ հասարակության ձևավորման գործում: Առանձնապես մեծ է եղել ակադեմիայի դերակատարությունը անկախ Հայաստանի կայացման տարիներին, որը գիտելիքահեռ տնտեսության ու զարգացած հասարակության մեջ է տեսնում պետության առաջընթացը: Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպություններն իրենց գիտական ու գիտատեխնոլոգիական ձեռքբերումները մշտապես անհատույց ծառայեցրել են պետության հզորացմանն ու ժողովրդի բարգավաճմանը:

Համաձայն «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի՝ ԳԱԱ-ն կոչված է լինելու Հայաստանի գիտության համակարգող մարմինն ու կառավարության խորհրդատուն: Ներկայում գիտության ոլորտի առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից են երիտասարդ գիտական կադրերի պատրաստման, գիտության, տնտեսության, ռազմարդյունաբերության ու կրթության ինտեգրման ուղիղումը լուրջ քարեփոխումների իրականացումն ու մոր ենթակառուցվածքների ձևավորումը:

ԳԱԱ-ի միջազգային գործունեությունն ուղղված է նպաստելու համակարգի գիտնականների ակտիվ մասնակցությանը միջազգային պայմանագրերին ու դրա-

մաշնորհային ծրագրերին, գիտաժողովներին և այլ գիտահովանավոր/գիտաճարարական միջոցառումներին: Իր գործունեությամբ ակադեմիան արժանացել է միջազգային գիտական համրության բարձր գնահատականին և վայելում է մեծ հեղինակություն:

ՀՀ ԳԱԱ-ն խիստ կարևորում է հայրենիքի ու սփյուռքահայ գիտնականների վիթխարի ներուժի համատեղումը և այն մեր գիտության ու տնտեսության զարգացմանն ուղղորդելը:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության ու հասարակական գիտությունների, հիմնարար ու կիրառական, բնական ու ճշգրիտ գիտությունների բնագավառներում:

Այսօր էլ ակադեմիան իր համակարգի կազմակերպություններով հզոր գիտական ներուժ է, որի արդյունավետ օգտագործումն էապես կնպաստի Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը, պետության հզորացմանն ու հասարակության կենսագործունեության բարելավմանը: Ներկայում ՀՀ ԳԱԱ-ն միջազգային չափանիշներին համահունչ քարեփոխումների փուլում է:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա. Ս. ՍԱՂՅԱՆ

Պատմական համառոտ ակնարկ



Ակադեմիայի հին շենքը (Արմյան փողոցում)

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության բարձրագույն գիտական հաստատությունն է, որը ձևավորվել է հայ ժողովրդի հարուստ մշակույթի ու կրթական ավանդույթների վրա և կոչված է համախմբելու գիտնականներին գիտության տարբեր բնագավառներում իրականացնելու հիմնարար հետազոտություններ, երևան հանելու և վերաինաստավորելու ազգի հոգևոր ժառանգությունը՝ ազգային անվտանգության ապահովման, սոցիալական ու տնտեսական հիմնախնդիրների լուծման համար: Հանրապետության անդրամիկ մշակույթային, կրթական ու գիտական կենտրոնը 1919 թ. Ալեքսանդրապոլում (ժամանակակից Երևանի պետական համալսարանն էր, որտեղ Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին իրագործվում էին գիտական հետազոտություններ կրթության, պատմության, տնտեսագիտության բնագավառներում:

Երկրորդ հանրապետության հաստատման առաջին իսկ տարիներին՝ 1921 թ., էջմիածնում հիմնադրվում է պատմա-մշակութային ինստիտուտը, որը 1925 թ. վերանվանվում է Գիտության և արվեստի ինստիտուտի՝ ակադեմիական բնույթի հաստատություն, որի նպատակն էր զարգացնել բնական, տեխնիկական, հումանիտար ու հասարակական գիտությունները: Հետագայում ստեղծվում են բույսերի պահպանման, կառույցների ու շինանյութերի, երկրաբանության, կուրիոսության, ռենտգենաբանության ինստիտուտները, առաջին երկրաշարժագիտական կայանը և



Հովսեփ Օրբելին և Վիկտոր Համբարձումյանը

այլ գիտական կազմակերպություններ:

1935 թ. վերոհիշյալ գիտատեսազոտական կազմակերպությունների բազայի վրա ստեղծվում է ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը, որի նախագահ է դառնում ակադեմիկոս Ֆրանց Յուլիի Լևինսոն-Լեսսինգը:

1938 թ. մասնաճյուղը գլխավորում է ակադեմիկոս



Ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը, Մարտիրոս Սարյանը, Դերենիկ Դեմիրճյանը և Ավետիք Իսահակյանը

Հովսեփ Աբգարի Օրբելին: Այդ տարիներին սկսում են զարգանալ ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական, հումանիտար ու հասարակական գիտությունները, Հայաստանը դառնում է հայագիտության խոշորագույն կենտրոն:

1943 թ. մայիսի 10-ին ՀՍՍՀ կառավարության ո-



Ակադեմիայի մի խումբ հիմնադիր անդամներ

րոշմամբ ստեղծվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի 23 հիմնադիր անդամների թվում էին Մ. Աբեղյանը, Ալիսանյան եղբայրները, Հ. Աճառյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Համբարձումյանը, Օրբելի եղբայրները և այլք: Հայաստանի ԳԱ առաջին նախագահ է ընտրվում հանրապետության պատմաբան, արևելագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

1947 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվում աշխարհահռչակ գիտնական, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիր ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը:

Խորհրդային իշխանության տարիներին ակադեմիայում կատարվում են համաշխարհային հնչեղության հայտնագործություններ աստղաֆիզիկայի, հաշվողական տեխնիկայի, կիրառական մաթեմատիկայի ու մեխանիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հայագիտության և գիտական այլ բնագավառներում:

Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումից հետո ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան 1992 թ. վերանվանվում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա:

1993 թ. ԳԱԱ նախագահ է ընտրվում գիտության ու արտադրության խոշորագույն կազմակերպիչ, պետական գործիչ ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանը, որի ղեկավարման տարիներին իրականացվում են ակադեմիայի համար նպաստավոր ➤ 2

Պատմական
համառոտ ակնարկ



➤1 ռեֆորմներ, ընդունվում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ԳԱԱ-ն ստանում է ՀՀ կառավարության խորհրդատուի հատուկ կարգավիճակ:

2006 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ է ընտրվում գիտության և կրթության ճանաչված կազմակերպիչ, ռադիոֆիզիկոս ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:


2008 թ. հայ ժողովուրդը մեծ շուքով տոնում է ակադմիո գիտնական ու հայրենասեր, ակադեմիայի շուրջ կեսդարյա նախագահ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 100-ամյա հոբելյանը, իսկ 2010 թ. սահմանվում է ակադեմիկոս Վ. Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ: 2011 թ. ընդունվում է «Գիտությունների ազ-

գային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը:


2021 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ է ընտրվում գիտության, կրթության, արտադրության հմուտ կազմակերպիչ ակադեմիկոս Աշոտ Սերոբի Սադյանը:

Ներկայումս Գիտությունների ազգային ակադեմիան շարունակում է զարգացնել գիտության տարբեր բնագավառներն ու գրանցել նվաճումներ, արդյունավետ համագործակցում է բուհերի, պետական կառույցների, ռազմարդյունաբերական համալիրի, արտադրողների, տնտեսության պետական ու մասնավոր հատվածի, տեղական ու միջազգային գիտական կազմակերպությունների հետ, ակտիվորեն մասնակցում է հանրապետական ու միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԳԱ ԵՎ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ



Վ. Ա. ՕՐՇԵՔՈՎ
(20.03.1887-02.02.1961)
ՀԽՍՀ ԳԱ նախագահ 1943-1947 թթ.



Վ. Հ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
(18.09.1908-12.08.1996)
ՀԽՍՀ ԳԱ նախագահ 1947-1993 թթ.



Ֆ. Տ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
(18.09.1923-10.01.2010)
ՀՀ ԳԱԱ նախագահ 1993-2006 թթ.



Ռ. Մ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
(01.05.1936)
ՀՀ ԳԱԱ նախագահ 2006-2021 թթ.



Ա. Ս. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
(07.04.1957)
ՀՀ ԳԱԱ նախագահ 2021 թվականից

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՐԾԱՆՔՆ ՈՒ
ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

...Հայկական կյանքում ակադեմիայի հիմնարկումը մի հոյակապ սկզբնավորություն է՝ հարուստ հեռանկարներով հղի:

Հայ ժողովուրդը ավելի քան երկհազարամյա իր գոյության ընթացքում ստեղծել է իր կուլտուրան, որ դարերի անձնագրի քաջությամբ պահել, պաշտպանել ու զարգացրել է և հասցրել է մեզ. մենք ստացել ենք մեծ և թանկարժեք ժառանգություններ՝ հին կլասիկ լեզու և մոր աշխարհիկ ճկուն լեզու, հարուստ գրականություն, ճոխ ֆոլկլոր և իմաստուն էպոս, պատկառելի ճարտարապետություն և ժողովրդական սրտագին մելոս:

Մեծ է և բազմակողմանի ակադեմիայի կատարելիք գործը մեր անցյալ ժառանգության գիտականորեն լուսաբանման, վերագնահատման և արժևորման տեսակետից:

Նա պիտի համախմբի հայ միտքը և գլխավորի այն: Արդի գիտական մեթոդների լուսարծակի տակ նա պիտի հունավորի հետազոտությունները և ուսումնասիրությունները: Գիտական անսպառ անվիզի բովոլ պիտի անցկացնի մեր բովանդակ կուլտուրան և կազմի նրա սինթեզը՝ հայտնաբերելով բյուրեղացած, անվիճելի արժեքներ ազգային և համամարդկային իմաստով:

Նա պիտի ճշտի հայ բաների սեմասիոլոգիան և քերականությունը, Հայաստանի տոպոնիմիկան, պիտի կազմի գիտության բոլոր ճյուղերի ակադեմիկ տերմինոլոգիան:

Նա պիտի լուսաբանի մեր գրականության ղեկավարող գաղափարները և հույզերը, այն, ինչ որ դարերի մեջ եղել է մեր հոգեկան աթոսֆերան: Նա պիտի յուրաքանչյուր գրողի տեղը որոշի մեր գրականության պատմության մեջ:

Նա պիտի որոշի նաև մեր ճարտարապետության ինքնուրույն ոճի տեղը ընդհանուր ճարտարապետական արվեստի մեջ, պիտի ցուցաբերի մեր արվեստի կրած ազդեցությունները և նրա հեռագրու ճառագայթումը ուրիշ ժողովուրդների արվեստի վրա:

Նա պիտի սպառնա հետազոտության ենթարկի հայ պատմությունը՝ շարկապված համաշխարհային պատմության հետ: Պիտի լուսաբանի մեր պատմության մղիչ ուժերը, նրա պաֆոսը: Պիտի արտացոլի հայ

ժողովրդի ծագումների իմաստը և նպատակը, որոնք կազմում են ժողովրդի պատմական ճակատագիրը:

Նա պիտի մեծ ջանք թափի մաթեմատիկայի, բնական գիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի զարգացման համար Հայաստանում և նրանց գործնական կիրառության, նույնչափ բժշկության, գյուղատնտեսության համար:

Ակադեմիան պիտի սերտ համագործակցության մեջ մտնի եղբայրական ռեսպուբլիկաների հետ:


Նա ջերմ հարաբերության մեջ պիտի մտնի արտասահմանի հայ առաջադեմ մտքի հետ, պիտի քաջալերի և խրախուսի այնտեղ ապրող հայ գիտնականներին:

Աճեցնելով մոր, երիտասարդ աշխատունակ կարեր, ընդլայնելով իմացության սահմանները՝ նա պիտի համընթաց քայլի գիտությունների համամիութենական ակադեմիայի հետ, պիտի աջակցի Միության հզորացմանը և բարձրացմանը. պիտի հասնի՝ մասնակցելու լուծմանը գիտական այն մեծ պրոբլեմների, որոնք դրված են ՍՍՄԿ գիտությունների ակադեմիայի առաջ, ուրեմն և բովանդակ մարդկության առաջ. այսպիսով, հայ ժողովուրդը կբերի իր միտքը և իր խոսքը ասած կլինի համաշխարհային կուլտուրայի պրոգրեսի մեջ:

Եվ վերջապես, Հայկական ակադեմիայի կուլտուր-պատմական մեծ գործերից առաջնակարգն է՝ բարձրացնել հայ ժողովրդի ինքնաճանաչությունը, խորացնել հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա մեջ դեպի հայրենիքը, լեզուն, կուլտուրան և հավատ դեպի իր պայծառ ապագան: Ակադեմիան պիտի հանդիսանա մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը: Նա պիտի լինի մեր կուլտուրայի գագաթը...

Խմբագրության կողմից – Մեծանուն գրող, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամ ԱՎ. Իսահակյանն այս հոդվածը հրապարակել է ԳԱ կազմավորմանը նվիրված հանդիսավոր նիստի հաջորդ օրը՝ 1943թ. նոյեմբերի 30-ին, «Սովետական Հայաստան» օրաթերթում: Որոշ կրճատումներով արտատպվում է ԱՎ. Իսահակյանի ԵԺ-ի ակադեմիական հրատարակության XII հատորից:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ



Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	Գիտության զարգացման հիմնադրամ	Հայագիտ. ուսումն. ֆինանսավորող համահայկական հիմնադրամ	«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ	Հայաստանի ակադ. գիտաինտ. կոմպ. ցանց (ASNET-AM)
---	-------------------------------	---	------------------------------------	--



Սույն թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված մեծավաստակ գրականագետ, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակին:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա ներկայացրեց Էդվարդ Ջրբաշյանի անցած գիտական ուղին՝ նշելով, որ այն օրինակ է նոր սերնդի համար: Յուրի Սուվարյանն առաջարկեց հավերժացնել Էդվարդ Ջրբաշյանի հիշատակը և ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակը

անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժինը վերանվանել ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի անվան գրականության տեսության և գեղագիտության բաժին: «Այսօր գրականության ոլորտում ժամային տեսակները փոխվել են, դարձել բազմազան, և գրականության տեսությունը շատ ակտուալ է: Ես կարծում եմ, որ մեր գրականագիտության ապագա հաջողություններն ավելի շատ կարող են պայմանավորված լինել նրանով, որ մենք լուրջ քայլեր կատարենք գրականության տեսության զարգացման գործում՝ շարունակելով ակադեմիկոս Ջրբաշյանի ավանդույթները»,- ասաց Յուրի Սուվարյանը:

«Էդվարդ Ջրբաշյանի մարդկային, բարոյական բարձր նկարագիրը և գիտնականի բացառիկ նվիրումը հայրենի գիտությանը վառ օրինակ են եղել մեր սերնդի, այդ թվում՝ ինձ համար, ում բախտ է վիճակվել լինել նրա ուսանողը Երևանի պետական համալսարանում և աշխատել նրա հետ Գրականության ինստիտուտում: Նրա մարդկային հմայքը ձևավորվում էր ներքին ազնվությունից, դիմացի-

նին հարգելու կարողությունից, անաչառ վերաբերմունքից ուսանողի և աշխատակցի հանդեպ, գիտության երախտավորներին ըստ արժանվույն գնահատելու ունակությունից: Նրա հիմնարար աշխատություններն այսօր էլ առանցքային նշանակություն ունեն գրականության պատմությամբ և տեսությամբ զբաղվող գիտնականների համար: Այդ աշխատությունները դասագիրք են երիտասարդ գիտնականների ձեռքին:

Այս գիտաժողովը լավագույն առիթ է՝ ևս մեկ անգամ արժևորելու Էդվարդ Ջրբաշյանի գիտական ժառանգությունը, որով մեր գրականագիտությունը՝ հենված գրականության տեսության վրա, ավելի բարձր մակարդակի հասավ»,- ասաց ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Հերիքնազ Որսկանյանը:

Ելույթներ ունեցան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղ-

յանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի վարիչ Սուրեն Աբրահամյանը, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի դուստր, ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան՝ ԵՊՀ հայ գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ Աշխեն Ջրբաշյանը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին նոյեմբերի 9-ին Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետում և նոյեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին շուրջ 3 տասնյակ գեղացումներ՝ նվիրված Էդվարդ Ջրբաշյանի գիտական հարուստ ժառանգությանը:

Միջոցառման կազմակերպիչներն են ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում քննարկվեցին գիտական արդյունքի առևտրայնացման հարցերը

Ս.թ. նոյեմբերի 13-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Գիտություն, տնտեսություն՝ տեխնոլոգիաների առևտրայնացում» թեմայով միջոցառումը: Այն կազմակերպել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորամուծության և ձեռնարկության ազգային կենտրոնը՝ «Գլոբալ ձեռնարկատիրության շաբաթ» նախաձեռնության շրջանակներում:

«Մեր ինստիտուտներն ունեն մի շարք նվաճումներ, որոնք կարող են առևտրայնացվել: Ունենք հաջողված օրինակներ: Հիմա ակադեմիայում փորձում ենք ավելի շատ զարգացնել տնտեսության պահանջարկից կամ պետական կարիքներից բխող հետազոտությունները, բայց մենք կարիք ունենք պատվերների և՛ պետական, և՛ մասնավոր ոլորտների կողմից: Այս նպատակով վերջին տարիներին ակադեմիայում մի քանի անգամ հավաքել ենք կիրառական ծրագրերի կատալոգներ, ներկայացրել բոլոր նախարարություններին և տնտեսվարող սուբյեկտներին: Դրանք պարբերաբար հրատարակվում են, և որոշակի աշխատանքների ուղղությամբ ունենք արդյունքներ: Որպեսզի խնդիրն ավելի համակարգային լուծում ստանա, մենք կարիք ունենք համագործակցելու Նորամուծության և ձեռնարկության ազգային կենտրոնի, մասնավոր ոլորտի հետ: Նման գիտաժողովները պետք է ավելի հաճախ կազմակերպենք, որպեսզի մի տեղ հավաքենք և՛ պատվիրատուին, և՛ կատարողին»,- ասաց



սաց գիտության և տեխնոլոգիաների գծով ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ Վարդան Սահակյանը:

«Մենք շատ ցանկանում էինք լայնամասշտաբ միջոցառումներ անցկացնել Գիտությունների ազգային ակադեմիայի հետ տեխնոլոգիաների առևտրայնացման գրասենյակի ստեղծման շրջանակներում և մեր համագործակցության հետ կապված, և սա մեր առաջին քայլն է: «Գլոբալ ձեռնարկատիրության շաբաթ»-ի թեման նորարարություններն են, և մենք ցանկանում ենք ցույց տալ գիտնականներին գյուտերի առևտրայնացման գործընթացը: Այս տարի ՀՀ կառավարությունը հաստատեց հատուկ բյուջե, և հաջորդ տարվանից արդեն կֆինանսավորվի առանձին տեխնոլոգիաների առևտրայնացման պետական գրասենյակի Հայաստանում: Սա նախադեպ է, և այն հնարա-

վորություն կտա՝ կատարելու ավելի ինստիտուցիոնալ աշխատանքներ: Մեզ համար շատ կարևոր է Գիտությունների ազգային ակադեմիայի հետ շարունակական համագործակցությունը»,- ասաց Նորամուծության և ձեռնարկության ազգային կենտրոնի տնօրեն Հայկ Մարգարյանը:

«Համաշխարհային ձեռնարկության շաբաթը 16 տարի է՝ կազմակերպվում է աշխարհում: Այս ծրագրին մասնակցում է ավելի քան 200 երկիր: Մենք առաջին անգամ ենք նման մեծ թափով մասնակցում, և ես հույս ունեմ, որ Հայաստանում սա կդառնա ավանդույթ»,- ասաց Հայաստանի ամերիկյան համալսարանի Չեռներեցության և նորարարական տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն Նոնեհ Հովհաննիսյանը:

Միջոցառման ժամանակ Նորամուծության և ձեռնարկության ազգային

կենտրոնի Տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի համակարգող, Տեխասի համալսարանի պրոֆեսոր Միհրան Արոյանը հանդես եկավ «Ինչ է տեխնոլոգիաների առևտրայնացումը» թեմայով զեկուցմամբ: Նա ներկայացրեց գիտական արդյունքի առևտրայնացման առաջին քայլերը և տեխնոլոգիաների փոխանցման գործընթացի հիմնական սկզբունքները, անդրադարձավ Հայաստանի գիտական ներուժին: «Վերջին մեկ տարվա ընթացքում մեր խումբը եղել է Հայաստանի տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում, և մենք հասկացել ենք, որ Հայաստանն ունի ուժեղ գիտական հնարավորություններ, որ գիտությունը և տեխնոլոգիաներն այն երկու ուղղություններն են, որոնց միջոցով Հայաստանը կարող է զարգանալ և դառնալ լուրջ կենտրոն գիտական հետազոտությունների և նորարարությունների համար: Եվ մենք հասկացել ենք, որ շատ կարևոր է Սփյուռքի ներգրավումն այս գործընթաց»,- ասաց Միհրան Արոյանը:

Այնուհետև ծավալվեց հարց ու պատասխան գիտական արդյունքների առևտրայնացման, հեղինակային իրավունքի, նոր տեխնոլոգիաների փոխանցման վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի նոր հետազոտությունը

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի գիտաշխատողները պարզել են, որ հակակարկտային ակուստիկ «իրանոթների» արձակած հարվածող ալիքի տարածումը մթնոլորտում ուղեկցվում է ~ 1 կՅց հաճախությամբ ակուստիկ և ~ 5 կՅց հաճախությամբ էլեկտրամագնիսական ալիքների առաքմամբ, և որ դրանց մակածման պատճառը հարվածող ալիքին ուղեկցող մրրկային հոսքերի առաջացումն է:

Ուղղորդված և ուժեղ հարվածող ալիքի տարածումը մթնոլորտում կարող է ուղեկցվել ոչ միայն չափազանց ցածր, այլ նաև մի քանի ՄՅց հաճախություններով էլեկտրամագնիսական ալիքների առաքմամբ: ՄՅց-ային ճառագայթումը պայմանավորված է ուղղորդված հարվածող ալիքի ազդեցությամբ առաջացած պլազմայի էլեկտրոնների վրա Երկրի մագնիսական դաշտի ազդեցությամբ:

«Կատարված հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները կարող են օգտագործվել մթնոլորտում հարվածող ալիքներ մակածող օբյեկտների՝ գերծայնային արագությամբ շարժվող մարմինների հայտնաբերման և տեղորոշման նպատակներով»,- ասաց ինստիտուտի գիտքարտուղար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

Հրանտ Խաչատրյանը:

Հետազոտության արդյունքները տպագրվել են «Acoustical Physics», «Chinese Physics Letters» և «Journal of Contemporary Physics» (Armenian Academy of Sciences) գիտական հանդեսներում: Ստացված արդյունքները զեկուցվել և ակտիվորեն քննարկվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում, ինչպիսիք են Իսպանիայի «31st International Conference on Phenomena in Ionized Gases», Իտալիայի Միջուկային ֆիզիկայի ազգային ինստիտուտի «Charged & Neutral Particles Channeling Phenomena» և ՀՀ ԳԱԱ ՖԳԴԻ-ի կողմից

«Electron, Positron, Neutron and X-ray Scattering under External Influences» պարբերաբար կազմակերպվող միջազգային գիտաժողովները:

Հետազոտություններն իրականացվել են բազային ֆինանսավորմամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորված թեմայի շրջանակներում (ղեկավար՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, N4 լաբորատորիայի վարիչ՝ Արթուր Արամյան):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՎԱԿՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ԱՎԱԿՆՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿՈՍ ԽԱՅԻՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՄԹԵՎ

Լրացավ կիրառական սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ժամանակակից տեսության դասականներից մեկի՝ ԶՅ ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԶՅ գիտության վաստակավոր գործիչ, ԶՅ մաթագահի և ԶՅ պետական մրցանակների դափնեկիր, 2021 թ. ԱՊՅ երկրների «Համագործակցության աստղեր» մրցանակի դափնեկիր Էդուարդ Եփրեմի Խաչիյանի 90-ամյակը:

Է. Խաչիյանը ծնվել է 1933 թ. օգոստոսի 17-ին Արցախի Առաքել գյուղում: 1956 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1956-2002 թթ. աշխատել է որպես Հայաստանի սեյսմակայուն շինարարության ԳՀԻ լաբորատորիայի վարիչ, գի-

տության գծով փոխտնօրեն, 1972-1988 թթ.՝ ԵՊՀ և ԵՃՀՅ պրոֆեսոր: 1997 թ.-ից ղեկավարել է ԵՊՀ շինարարական մեխանիկայի ամբիոնը: ԶՅ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գլխավոր գիտական աշխատող է:

Է. Խաչիյանի հետազոտություններն ընդգրկում են կիրառական սեյսմոլոգիան, շինարարական մեխանիկան, տատանումների տեսությունը, շինությունների դինամիկան և սեյսմակայուն շինարարությունը: Դեռևս 1960-ականներին նա արդեն հեղինակություն էր սեյսմակայուն շինարարության բնագավառում: Նրա «Շինությունների սեյսմակայունության թեորիայի որոշ կիրառական խնդիրներ» և «Սեյսմիկ ազդեցությունները բարձրահարկ շենքերի և շինությունների վրա» աշխատությունները ուղեկցվում էր դարձան

տարածական և ալիքային խնդիրների լուծման, ինչպես նաև սեյսմակայուն շինարարության մոդերնի հիմնական դրույթների մշակման բնագավառներում:

Է. Խաչիյանը զարգացրել է երկրաշարժի էներգիայի, ապարների սահմանային դեֆորմացիայի, երկրի մակերևույթի տեղափոխությունների և արագացումների կամֆազուլանման տեսական եղանակները՝ երկրի մակերևույթի վրա երկրաշարժի թողած մակրոսեյսմիկ հետևանքների օգտագործմամբ:

Է. Խաչիյանը համարում է, որ իր ամենամեծ հարստությունն իր աշակերտներն են: Նա օժտված է անխոնջ աշխատասիրությամբ և նպատակահնդվածությամբ, բարյացակամությամբ ու համեստությամբ: Նրա աշխատանքները հիմնված են իրական երկրաշարժերի ուսումնասի-

մակայուն շինարարության մոր մորմներում:

Սեյսմակայուն շինարարության խորհրդային մասնագետներից միակը հենց է. Խաչիյանն էր, որ հասկացավ ու կողմ եղավ IDNDR-ի մաթաժեռնություններին մախկին ԽՍՀՄ տարածքում, ճիշտ գնահատեց ինժեներների մոր, առաջատար դերը սեյսմիկ ավերածությունների նվազեցման գործում: Նրա մասնագիտական ակտիվ դիրքորոշումը մեծ դեր ունեցավ ԱՊՅ տարբեր երկրներում սեյսմակայուն շինարարության մոր մորմներ մշակելու և ընդունելու գործում: Եվ արժանիորեն է. Խաչիյանը 2023 թ. սեյսմակայուն շինարարության բնագավառում գիտության և տեխնիկայի զարգացման գործում ունեցած ներդրման համար Եվրասիական սեյսմոլոգիական ասոցիացիայի կողմից պարգևատրվեց 1-ին կարգի շքանշանով:

Է. Խաչիյանը հեղինակ է ավելի քան 250 աշխատությունների և մորմատիվ փաստաթղթերի ու հեղինակային հավաստագրերի, ակտիվորեն մասնակցում է տարբեր երկրների սեյսմոակտիվ շինարարության փաստաթղթերի մշակմանը, միջազգային գիտաժողովների և սեմինարների, բազմաթիվ գիտական հրատարակությունների խմբագրական կոլեգիաների անդամ է: Պարգևատրվել է «Պատվո մշան» շքանշանով:

ԶՅ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը, երկրաբանական գիտությունների ինստիտուտը ջերմորեն շնորհավորում են նշանավոր գիտնականին՝ ծննդյան 90-ամյակի կապակցությամբ և մաղթում առողջություն ու աշխատանքային մորամոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ արդարասահմանյան անդամ Լևոն Զեքիյանին շնորհվեց ՀՀ ԳԱԱ մեդալ

Վերջերս ԶՅ ԳԱԱ պատմության ինստիտուտում տեղի ունեցավ հանդիսավոր միտո՝ նվիրված ԶՅ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Վենետիկի գիտությունների, գրականության և արվեստի ակադեմիայի իսկական անդամ, Գերաշնորհ Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի ծննդյան 80-ամյակին:

Միջոցառման ժամանակ ԶՅ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը Գերաշնորհ Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանին հանձնեց ԶՅ ԳԱԱ մեդալ:

«Գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելանսին նվիրված մեդալը առաջինը շնորհվում է Գերաշնորհ Լևոն Զեքիյանին՝ իր 80-ամյա հոբելանսի առիթով: Վաստակաշատ անհատականություն է Լևոն Զեքիյանը, ով ունի անուրանալի ներդրում գիտության ասպարեզում և մարդկային բարձր հատկանիշներ: Ես բախտ եմ ունեցել ներկա գտնվելու Ստամբուլում նրա օժանդակությամբ արարողությանը: Մենք հպարտություն էինք զգում, որ ունենք նման հայազգի գործիչ»,- ասաց ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

«Գերապայծառը վաղուց մեր ինստիտուտի լավագույն բարեկամն է, մեր եկեղեցու նշանավոր գործիչներից մեկը: Երբ ծանոթանում ես նրա աշխատություններին, տեսնում ես, թե ինչքան լայնախոհ կարող է լինել մարդը և ինչքան ընդգրկուն միտք կարող է ունենալ: Հայկական Սփյուռքը պատկերացնել առանց Լևոն Զեքիյանի՝ հնարավոր չէ, հատկապես, երբ խոսում ենք դասականության մասին»,- ասաց ԶՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Գերաշնորհ Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի կյանքն ու



գործունեությունը ներկայացրեց ԶՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթաբանների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ Գևորգ Ստեփանյանը: Նա շնորհեց Լևոն Զեքիյանի դերը Սփյուռքում ազգային ինքնության պահպանման գործում. «Անգնահատելի է նրա ներդրումը հայագիտության, կուլկասագիտության, գրականության, լեզվաբանության բնագավառներում: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական ուսումնասիրությունների: Հիմնական աշխատանքները վերաբերում են գիտակցության, փիլիսոփայության, հումանիզմի, հայոց պատմության, բանասիրության և մշակույթի, ազգային և կրոնական ինքնության հարցերին, հայ տեսահայեցողական և աստվածաբանական մտքին: Հեղինակած 14 մենագրություններում Լևոն Զեքիյանն ուսումնասիրել է հայերի ներկայությունը Իտալիայում, արդի հայ թատրոնի սկզբնաբայերը, հայության արդիականացման

գործընթացները և ինքնությունը: Նա խալեբեն է թարգմանել «Նարեկը» և խմբագրել ավելի քան 25 հատոր գիրք»:

ԶՅ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը շնորհեց Լևոն Զեքիյանի ներդրումը հայ-իտալական մշակութային առնչությունների ասպարեզում: «Նա պոլիգլոտ է, ով վարժ տիրապետում է բազմաթիվ լեզուների: Նրա նվիրյալ գործունեության մեջ առանձին տեղ է զբաղեցնում տարբեր երկրներում հայ արվեստին նվիրված միջոցառումների տեսական շարքը՝ մի քանի տասնյակ գիտաժողովներով և դասախոսություններով: Իրապես, նա արդի հայագիտության անդադրում աշխատավորն է»,- նշեց Ալբերտ Խառատյանը:

ԶՅ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Արծվի Բախչինյանը ներկայացրեց Լևոն Զեքիյանի մաթաժեռնությամբ Իտալիայում հիմնված «Պո-Արաքս» մշակութային ընկերակցությունը, որը հովանավորում է ամեն տարի՝ օգոստոսին, Վենետիկի պետական համալսարանի հայագիտական ամբիոնի աշակցությամբ կազմակերպվող հայոց լեզվի և մշակույթի խտացված դասընթացը: «Այս դասընթացը միտում ունի լայն պատկերացում տալու դասական և ժամանակակից հայ մշակույթի և պատմության մասին: Այն Սփյուռքում ինստիտուցիոնալ գործունեության եզակի օրինակ է»,- նշեց Արծվի Բախչինյանը:

ԶՅ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Տորք Դալայանը ներկայացրեց Լևոն Զեքիյանի գործունեությունը՝ որպես գիտության կազմակերպիչ:

ԶՅ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԵԳԱԾ-ն ափոփել է մոժույթի արդյունքները

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր»-ն ամփոփել է 2023 թ. «Գիտական հոգվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման մրցույթի» արդյունքները:

Մրցույթի նպատակն է խրախուսել գիտության բոլոր բնագավառներով միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերում հոդվածների տպագրությունը, հայագիտության, հումանիտար և հասա-

րակական գիտությունների բնագավառներով անգլալեզու տպագրությունը, նպաստել ԶՅ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Մրցույթի առաջին՝ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ տպագրության համար դրամաշնորհի տրամադրումն ենթադրագրով շահառու է ճանաչվել 24 երիտասարդ գիտնական:

Երկրորդ՝ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում, ըստ տվյալ կատեգորիայի ամսագրերի դասակարգման, առաջին (Q1) քառորդի առաջին հինգ ամսագրերում տպագրած հոդվածի համար դրամաշնորհի տրամադրումն ենթադրագրով շահառու է ճանաչվել 2 երիտասարդ գիտնական:

Երրորդ՝ «Հայագիտության և հումանիտար գիտությունների, հասարակական գիտությունների բնագավառներում

(Գիտության կոմիտեի ցանկի 5-րդ և 6-րդ բաժիններում ընդգրկված մասնագիտություններով) «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման քառորդներում ընդգրկված ամսագրերում տպագրված գիտական հոդվածների համար տրամադրումն ենթադրագրով շահառու է ճանաչվել 8 երիտասարդ գիտնական:

ԶՅ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏՏ-ԲԵՐԻ ՀԱՐԹԱԿ



ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների ս.թ. հոկտեմբերի 30-ի համատեղ նիստում ընդարձակ ելույթով հանդես եկած ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը մի դրվագում, մեր կարծիքով, թույլ տվեց արտաբուստ անմեղ ու զրավիչ, բայց միաժամանակ մտահոգիչ ու վտանգավոր հայեցակարգային մի ձևակերպում, այն է՝ «**Հայրենիքը պետությունն է, սիրո՞ւմ են հայրենիքը՝ ուժեղացրո՞ւ պետությունը**»։ Իհարկե, հող-հայրենիքի վրա հիմնված պետականությունը սիրելը անառարկելի ճշմարտություն է։ Բայց եթե այս կարգախոսը գործածվեր սովորական մի երկրի առնչությամբ, կարելի էր ընկալել ու չառարկել, քանզի այն նույնիսկ հայրենասիրական դաստիարակիչ բաղադրիչներ է պարունակում։ Սակայն, կարծում ենք, միանգամայն ուրիշ է և այլ կերպ պիտի ընկալվել պատմաաշխարհագրական բազմահարուստ ու պատմաքաղաքական և հոգևոր-մշակութային հագեցած անցյալ ունեցող, իսկ ներկայումս աշխարհաքաղաքական բարդ կացության մեջ հայտնված Հայաստանի ու հայ ժողովրդի պարագայում։

Իբրև պատմաբան և ավելի քան երեք-հազարամյա Հայք-Հայաստանի պատմության քիչ թե շատ գիտակ՝ կարծում ենք, որ չի կարելի քաղաքական այդ երկու՝ «Հայրենիք» և «Պետություն» հասկացությունները տարածականորեն նույնացնել։ Ցավոք, հիմ և միջնադարյան հինգ-վեց պետականությունները, արտաքին ու ներքին աննպաստ գործոններով պայմանավորված, հիմնականում չեն համընկել մեր հսկայածավալ հայրենիքի՝ «Աշխարհացոյց»-ում ներկայացված Մեծ Հայքի քարտեզի 15 աշխարհների (նահանգների) հետ։ Եվ միշտ չէ, որ դրանք կարող են համընկնել։ Աշխարհի շուրջ 200-ի հասնող երկրներում միշտ չէ, որ կարելի է հանդիպել տվյալ ժողովրդի հայրենիքն ու պետությունը տարածականորեն իրար նույնական կամ առավել ևս՝ լիովին համընկնելու իրողությանը։

Նկատենք, որ ՀՀ հարևաններից 2-ը՝ Իրանը և Վրաստանը, որոնց հետ բարիդրա-

ցիական հարաբերություններ ունենք, ի սկզբանե ապրում են իրենց պատմական հողի վրա, և նրանց հայրենիքն ու պետությունը տարածականորեն հիմնականում համընկնում ու, ըստ էության, նույնական են։ Իսկ մյուս երկուսը՝ Թուրքիան և Ադրբեջանը, որոնց հետ առճակատման մեջ ենք և դիվանագիտական հարաբերություններ չունենք, իրենց պատմական հայրենիքում չեն, այլ բռնազավթած տարածքներում։ Ավելին, դրանց պետականություններն իրականում կառուցված են Հայոց պատմական հայրենիքի տարածքների վրա, որի արդյունքում՝ ՀՀ-ի հանդեպ թշնամանք, միջազգայնորեն միջպետական հարաբերությունների չկարգավորված վիճակ և նոր պատերազմի հրահրման և տարածքներ գրավելու հավակնություններ։

Պատմականորեն ստեղծվել է մի իրավիճակ, որ ներկայիս մեր պետությունը կազմում է մեր պատմական հայրենիքի ընդամենը 1/10-րդ մասը, և որի տարածքային ամբողջականության հանդեպ նոր ոտնձգության սպառնալիք կա, էլ չենք խոսում Արցախի փաստական կորստի մասին։ Թուրք-ադրբեջանական ծավալապաշտ քարոզչամեքենան, կեղծելով պատմությունն ու իրականությունը, հավակնում է տիրանալ բուն արևելահայ այլ տարածքների, ընդհուպ մինչև Երևան՝ դրանք ներկայացնելով իբրև ոչ ավել, ոչ պակաս «Արևմտյան Ադրբեջան»։

Նման լկտի հավակնությունների պայմաններում կարծում ենք, որ հանդես գալով քարոզչական բնույթի նման «Հայրենիքը պետությունն է», այսինքն՝ ընդամենը Հայաստանի Հանրապետությունն է բառախաղի նմանվող զգուշավոր կարգախոսով, որ մեր, ըստ էության, հայրենիքը միայն ներկայիս ՀՀ-ն է, դա կհասկանա մեր հարևան, մեղմ ասած, քաղաքական հակառակորդը և այլևս չի ոտնձգի մեր այս պետականության սահմաններին ու տարածքին, ինչին որ վերջին տարիներին արդեն քանիցս ականատես ենք եղել։

Հայրենիքն ու պետականությունը հոգևոր իմաստով անբաժանելի, փոխրացնող ամբողջություն են։ Պարզապես անթույլատրելի է մեր մեծ Հայրենիքն ու մեր ներկայիս փոքրատարածք պետությունը՝ ՀՀ-ն, մտովի կտրել իրարից, օտարացնել ու նույնիսկ հակադրել իրար։ Ընդհակառակը, թեկուզ իբրև պատմական հիշողություն, մո-

ռացության չտալով մեր պատմական մեծ Հայրենիքը, ազգովի պիտի ջանանք պաշտպանել ու ամրակայել ներկայիս մեր պետականությունը՝ անկախ նրա տարածքային չափերից։ Հայ ժողովրդի ավելի քան երեք-հազարամյա Հայրենիքն այն բնօրրանն է, որտեղ բնապատմական օրինաչափ զարգացումներով կազմավորվել է հայ ժողովուրդը որպես ազգ-հանրույթ, քաղաքական առումով ինքնակազմակերպվել, ու կերտվել են հայոց իրն և միջնադարյան պետականությունները, ստեղծագործ աշխատանքով արարվել են հոգևոր-մշակութային բազում համամարդկային արժեքներ և այլն։ Մեր

Ցավալիկ ու դատապարտելի այն է, որ այդ երկու ցեղակից պետությունները՝ գործնականում խորհրդային Ռուսաստանի օժանդակությամբ, հատկապես 1920 թ. Ալեքսանդրապոլի և 1921 թ. Մոսկվայի ու Կարսի հայավմաս պայմանագրերով յուրացնելով հայապատկան երկրամասերի մեծ մասը, այդ թվում՝ 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցելով խորհրդային Ադրբեջանին, այժմ էլ համաշխարհային հանրության ու միջազգային կառույցների աչքի առաջ սպառնում են նոր պատերազմով, ՀՀ ղեկավար շրջանակների կող-

ՄՏԱՀՈԳԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ՀԱՅՐԵՆԻՔ» - «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայրենիքի միջուկից՝ ՀՀ-ից բացի, մեր ներկա ու ապագա սերունդները պիտի շարունակ հիշեն ու սիրեն նաև մեր պատմական **Մեծ Հայրենիքը՝ Հայք-Հայաստանը**, ոչ թե միայն իբրև զուտ հիշողություն, այլև որպես **պահանջատեր**։ Այդ ամենը ոչ միայն չպետք է մոռացության մատնվեն, այլև դրվեն մեր ազգային պետական կրթության ու նաև քաղաքականության հիմքում։ Եթե մեր հայրենիքը միայն ՀՀ-ն է, կնշանակի, որ մենք այլևս չպետք է մտածենք ու գործենք բռնազավթված մեր հայրենիքի երկրամասերը վերադարձնելու, պատմական արդարությունն ու հայ ժողովրդի իրավունքները վերականգնելու ուղղությամբ, իսկ հոգևոր առումով՝ մոռացության տանք Հայոց ավելի քան երեքհազարամյա պատմությունը։

Եթե Հայոց պետականությունները կերտվել են Հայոց հայրենիքում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Հայկական Կիլիկիայում, ապա միջնադարում մեր տարածաշրջանում հայտնված թուրք-թաթարական վաչկատուն բարբարոս ցեղերը պետականություն են հիմնել բնավ ոչ իրենց պատմական հայրենիքում, այլ օտարի հողում։ Խոսքը վերաբերում է օսմանյան պետությանը, որը, նվաճելով հարևան երկրները, առաջին հերթին կործանելով Բյուզանդիան, ինչպես նաև նվաճելով Հայաստանի մեծ մասը (Արևմտյան Հայաստանը), հիմնեց Օսմանյան կայսրությունը՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը։ Իսկ մյուսը՝ դարձյալ միջնադարում, անդրկովկասյան տարածաշրջան ներթափանցած նրա ցեղակից թուրք-թաթարական քուչկոր ցեղերից առաջին անգամ 1918 թ. մայիսին պետություն դարձած «Ազերբայջան-Ադրբեջանը» յուրացրեց պարսկական «Ատրպատական» երկրամասի անվանումը և բռնազավթեց հայոց պատմական հողերը։


միջ շարունակ կրկնվող ՀՀ ընդամենը 29,8 հազ քառ. կմ տարածքից նոր հողակտորներ ու գյուղեր «պոկելով», միջանցքներ պահանջելով և այլն։

Մի պահ, եթե անգամ մենք անգիտանանք, թե Արևմտյան Հայաստանը «մեր հայրենիքը չէ», կամ դա ընդամենը պատմական անցյալ է, ապա այդ համատեքստում մեզ շարունակ տանջելու է մեր հայրենիքի կորստի անեմաթարմ օրինակը, թե «Արցախը մեր հայրենիքը չէ՞»։ Ցավոք, ներկայումս այսպես են գրվում Հայոց պատմության ու հայրենագիտական բնույթի դասագրքերը, և նոր սերնդին հաճախ հրամցվում են ապագային, օտարածին գաղափարներ, տեսադրույթներ ու կրթական չափորոշիչներ, ինչը կնշանակի սխալ հունով տանել նոր սերնդի կրթությունն ու ազգային արժեհամակարգով դաստիարակությունը։

Ամփոփելով արձանագրենք, որ վարչապետի արտահայտած նման ձևակերպումը չի բխում մեր ժողովրդի ազգային կենսական շահերից։ Վերջապես պետք է սթափ գնահատել, թե թուրք-ադրբեջանական քաղաքական լկտիության հասնող պետական մակարդակով հավակնություններն ուր են հասել։ Այս համատեքստում հարկ է առաջնորդվել մեր մեծերի պատգամով. **ազգի, հայրենիքի ու պետության փրկությունը** միասնության և անբաժանելիության մեջ է։ Բայց, ցավոք, դարձյալ հարց է ծագում՝ արդյոք մի՞շտ ենք առաջնորդվել ու առաջնորդվում **հայակերտումի** ու **հայրենակերտումի** այդ գաղափարով։ Այդ առումով ազգովի մտածելու, խորհելու, դասեր քաղելու ու հետևություններ անելու, իսկ որ առավել կարևոր է՝ գործելու շատ բան կա։

Արարատ ՀԱՎՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Վիմագրական մշակույթ. Ժայռապատկերներից մինչև մեր օրեր» միջազգային գիտաժողովը



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում ս.թ. նոյեմբերի 10-11-ը տեղի ունեցավ Հայկական լեռնաշխարհում վիմագրական մշակույթը ներկայացնող միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ

գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակին։

Թեմատիկ առումով գիտաժողովն աննախադեպ էր։ Սա Հայաստանում անցկացված առաջին վիմագրագիտական միջազգային համաժողովն էր, որի մասնակից 25 զեկուցողները ներկայացնում էին ինչպես Հայաստանի տարբեր գիտական հաստատությունները՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, պատմության, լեզվի, արվեստի, արևելագիտության ինստիտուտները, Մաշտոցյան Մատենադարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, Վ. Բրյուսովի անվան համալսարանը, այնպես էլ արտերկրի մի շարք գիտակրթական կենտրոններ՝ Մյունստերի և Բեռլինի ազատ համալսարանները (Գերմանիա), Լոզանի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտը (Շվեյցարիա), Թբիլիսիի Գ. Ծերեթելու անվան արևելագիտության ինստիտուտն ու Իլյա պետական համալսարանը (Վրաստան)։

Գիտաժողովի յոթ նիստերը թեմատիկ առումով բազմազան էին՝ ժայռապատկերագրությունից մինչև ոչ պաշտոնական վիմագրություն՝ գրաֆիտի, ժամանակագրո-

րեն՝ Ք.ա. VII-V հազարամյակից մինչև մեր օրեր։ Առանցքում, անշուշտ, վիմագրական ավանդույթն էր՝ քարի վրա պատկեր ու գիր թողնելու մարդկային մտածողության ու գործելակերպի դրսևորումներից մեկը, որը վաղնջական ժամանակներից տեղեկույթի փոխանցման պարզագույն գծապատկերային ձևերից հասել է կամոնավոր գրային համակարգերի՝ սեպագրություն, արամեերեն, հունարեն, լատիներեն և, վերջապես, հայ վիմագրություն։


Ժայռապատկերագրությանը նվիրված առաջին նիստը վերաբերում էր ժայռապատկերի միջոցով տեղեկույթի փոխանցման ու ընկալման վաղ դրսևորումներին։ Ինչ վերաբերում է նախամաշտոցյան գրային համակարգերին, ապա դրանցից ամենաակնառուն, թերևս, Վանի թագավորության սեպագիրն է, որը միջոց է դարձել անգամ Բիայնիլի և Էթիոնի երկրների միջև ուրարտական կայսրության սահմանները որոշելու հարցում։

Հայ վիմագրությանը նվիրված նիստերը թեմատիկ առումով ևս բազմազան էին՝ վիմագրական լեզվաբանություն, նորահայտ և այլալեզու վիմագրեր, գրաֆիտի, վիմագրերի թվայնացման խնդիրներ և այլն։ Հայ հնա-

գիտական ու մատենագրական հուշարձանների ուսումնասիրության համապատկերում առանցքային ճշմանակություն ունեն հայերեն վիմագրերը, որոնց նվիրված զեկուցումներն իրականում մասնավոր թվացող հարցերն ընդհանրացնող հետաքրքիր բացահայտումներ էին. տապանագրեր, եկեղեցիների որմնաքիչ պահպանված հրատարակված ու անտիկ վիմագրեր, մնացածը՝ անվաճառելի վիմագրական ժառանգություն, առանձին բնակավայրի ուսումնասիրություն ըստ տեղի վիմագրերի, հայրապետական մասնական բովանդակության արտացոլումներ վիմագրական հուշարձաններում և այլն։

Թեմատիկ առումով չէր անտեսվել նաև ոչ վաղ անցյալի ու ժամանակակից գրաֆիտին ոչ պաշտոնական գիրը, որը ժամանակակից մարդու հոգեբանական հույզերն ու վարքագիծը ներկայացնող յուրօրինակ երևույթ է։ Գիտաժողովի վերջին նիստն ամփոփվեց վիմագրական ժառանգության թվայնացման ու պահպանության հարցերին նվիրված զեկուցմամբ, որն արդի վիմագրագիտության առաջնային խնդիրներից է։

Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



- Պարոն Սաֆրաստյան, Հայաստանի իշխանության ներկայացուցիչները վերջին շրջանում հայտարարում են, թե իբրև թուրքիան ու Ադրբեջանն այլևս «Ջանգեզուրի միջանցք» չեն պահանջում Հայաստանից: Իրո՞ք դա այդպես է, թուրք ու ադրբեջանցի պաշտոնյաների հայտարարություններում այլևս չկա՞ այդ խոսույթը:

- Ես կարծում եմ, որ իրականում այդ խոսույթը դուրս չի էլ եկել նրանց օրակարգից: Հենց վերջերս նման հայտարարությամբ թուրքական երկրների կազմակերպության նիստում հանդես եկավ Էրդողանը: Եթե ռազմավարական տեսանկյունից դիտարկենք, ապա ես կարծում եմ, որ այսպես կոչված «Ջանգեզուրի միջանցքը» ռազմավարական նշանակություն ունի թուրքիայի համար: Ընդ որում այդ նշանակությունը ոչ միայն ուղղակի կապն է Ադրբեջանի հետ, այլ նաև դա ամենակարճ ճանապարհն է՝ հաղորդակցվելու թուրքական երկրների հետ: Այնպես որ այս ծրագիրը ռազմավարական նշանակություն ունի թուրքիայի և Ադրբեջանի համար, և այն այսօր շարունակում է մնալ օրակարգում:

- Ուժի սպառնալիք մշտապես կա, բայց հնարավոր է ուժով փորձեն բացել այդ միջանցքը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ԸԱՐՑԸ ՄԼՈՒՄ Է ԹՈՒՐԷ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Խմբագրության կողմից - Ընթերցողին ենք ներկայացնում «Առավոտ» օրաթերթի թղթակից Ռ.Հովհաննիսյանի հարցազրույցը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի հետ (13 նոյեմբերի 2023)

- Այո՛, շատ ճիշտ նկատեցիք, ուժի սպառնալիքը կա, և չի բացառվում, որ դա կարող է ուժեղանալ: Այստեղ մի խնդիր կա, որը պետք է լավ գիտակցենք: Դա այն է, որ Իզդիրը Նախիջևանի հետ կապող երկաթգծի՝ Թուրքիայի տարածքով անցնող հատվածը չի կառուցվել: Դրա մասին տարիներ շարունակ թուրքիայում խոսակցություններ կան, բայց մինչև հիմա չի նախարարությունը չի սկսվել: Վերջերս Թուրքիան համաձայնագիր ստորագրեց Ադրբեջանի հետ, որ համատեղ իրականացնեն այդ շինարարությունը: Ես կարծում եմ՝ Թուրքիան այդպիսով փորձում է օգտագործել Ադրբեջանի միջոցները: Այդ նախագիծը բավական ծախսատար՝ միլիարդների հասնող նախագիծ է և ժամանակ կպահանջի: Հետևաբար, հիմա Թուրքիայի համար իրատեսական չէ, որ «Ջանգեզուրի միջանցքը» միանգամից կգործի: Դա ապագայի խնդիր է, բայց հիմա Թուրքիայի համար կարևոր է, որ ստանա Հայաստանի համաձայնությունը: Հետևաբար, ես կարծում եմ, որ ներկա փուլում Թուրքիան կշարունակի իր ճնշումները Հայաստանի վրա՝ օգտագործելով նաև Ադրբեջանին: Կարող եմ լինել տարբեր սաղարթներ սահմանին: Հետևաբար, հարցին, թե ուժի կոչինե՞ս, ես այսպես կպատասխանեմ՝ ես կարծում եմ, որ այդ հնարավորությունը կա, բայց դեռևս դա իրական չէ:

- Ի՞նչ հնարավորություններ ունի Հայաստանը՝ դիմակայելու այս ծրագրերին:

- Հայաստանը պետք է շարունակի պնդել, որ պետք է լինի ոչ թե միջանցք, այլ ճանապարհ, որը կլինի ՀՀ ինքնիշխանության, իրավագործության և 100-տոկոսանոց իսկողության ներքո:

- ՀՀ իշխանության ներկայացուցիչները նաև վերջին շրջանում հայտարարում են, որ զգուշավոր լավատեսություն ունեն հայ-թուրքական հարաբերությունների հարցում: Օրինակ՝ իրատեսական են համարում այն, որ առաջիկայում հայ-թուրքական սահմանը կարող է բացվել երրորդ երկրների համար: Դուք տեսնո՞ւմ եք նման միտում, լավատեսության համար հիմքեր կա՞ն:

- Լավատեսությունը կյանքում լավ բան է, իհարկե, բայց իրականությունը քիչ հնարավորություններ է թողնում լավատեսության համար: Թուրքիան Հայաստանի հետ բանակցություններում կիրառում է որոշակի մարտավարություն: Եվ այդ մարտավարությունը հետևյալն է. օգտագործելով Ադրբեջանի գործունեությունը է գործադրում Հայաստանի վրա, որ Հայաստանից ստանա այն, ինչ ուզում է: Եթե ինչ-որ մի բան ստանա, ինքը մի փոքր քայլ կանի: Հետո, եթե դարձյալ մի բան ստանա, մի փոքր քայլ էլ կանի: Բայց այդ հիմնական խնդիրը՝ սահմանի բացումը, ինքը թողնում է ապագայի համար: Սա է Թուրքիայի մարտավարությունը, և ես կարծում եմ, որ իրենք բավական լուրջ աշխատել են նույնիսկ նախքան բանակցությունների մեկնարկը: Հատուկ խումբ է եղել, որն այդ մարտավարությունը մշակել է:

Հիմա այն փուլն է, որ թուրքերը հայտարարում են, թե սահմանը կարող է բացվել երրորդ երկրների համար: Սպասում եմ, որ Հայաստանից ինչ-որ զիջում կորգեն, դա է իրենց նպատակը: Հենց այնպես իրենք սահմանը չեն բացի, դրա դիմաց ինչ-որ զիջում կփորձեն ստանալ և շատ փոքր քայլ կանեն:



Քրազիլական ժաբոտիկաբա ծառն առանձնանում է նրանով, որ դրա պտուղներն աճում են անմիջապես քնի վրա: Դրանց համը հիշեցնում է մուսկատ տեսակի խաղող, որի հատիկների տրամագիծը մոտ 4 սմ է: Կլեպն ունի մուգ կարմիր գույն, իսկ միջուկը սպիտակ է: Ծառը պտուղ է տալիս տարեկան 5-6 անգամ, սակայն հաստապտուղները պահպանվում են մինչև 4 օր, որից հետո միջուկի ներսում սկսվում է խմորում, և դրանք օգտագործվում են զինի ստանալու համար: Այնպես որ դրանց արտահանումն այլ երկրներ հնարավոր չէ:

Կալիֆոռնիայում հայտնաբերել են բազմոտանի, որն ունի ոտքերի առավելագույն քանակ՝ մինչև 750: Ընդ որում այս տեսակը բնակվում է կաղնու միայն մի անտառում: Դրանց ամենախոշոր ներկայացուցիչ երկարությունը 33 մ է:

ՍԱՄ-ում կատարվում են երազների կառավարմանը, ավելի ստույգ՝ երազներում առևտրային գովազդի ներդրմանն ուղղված գիտափորձեր: 11 երկրների քնի և երազների 40 հետազոտողներ ստորագրել են կոլեկտիվ նամակ՝ երազների մասն մանիպուլյացիաներն արգելելու պահանջով:

Քաղցած պտղաճանձը սնունդ հայթայթելու համար կարող է առանց դադարի թռչել 15 կմ: Դա հավասարազոր է մարդու՝ սնունդ հայթայթելու նպատակով 10000 կմ վազելուն:

Վերջին մարդահամարի տվյալներով Հնդկաստանի բնակչությունը գործածում է շուրջ 221 լեզու: Ռուսաստանում այդ ցուցանիշը մոտավորապես 180 է:

Անգլիացի դիզայներները բնապահպանների և ճարտարագետների հետ համատեղ ստեղծել են ավիաուղևորի համար նախատեսված ճաշի սպասքի հավաքածու հիմնականում թափոններից: Սովորաբար երկարատև թռիչքից հետո յուրաքանչյուր ուղևորից մնում է մինչև 500 գ միանգամյա օգտագործման պլաստիկ սպասք: Հավաքածուի սկուտեղը պատրաստված է սուրճի մրուրից, պատառաքաղը՝ կոկոսի մազոտ կեղևից, բաժակը՝ բրնձի հատիկների թեփից, ճաշի տուփը՝ բամբակի տերևներից, համեմունքների դարչնագույն տուփը՝ ծովային ջրիմուռներից: Այս ամենը հեշտությամբ քայքայվում է աղբանոցներում, իսկ աղանդերի տուփը թխված է վաֆլիի խմորից, այնպես որ այն կարելի է ուտել:

Արբանյակներից կատարված դիտումներից պարզվել է, որ երկրի վրա առկա է 10 կիլովատտ և ավելի մեծ հզորությամբ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆՏԱՔՐՔԻՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐ*

յամբ 68661 արևային էլեկտրակայան: Ընդհանուր առմամբ դրանց հզորությունը 423 գիգավատտ է, որն ավելի մեծ է, քան աշխարհի բոլոր ատոմային էլեկտրակայանների հզորությունը (395 գիգավատտ): Արևային կայանների շինարարության գծով առաջատարը Հնդկաստանն է, որտեղ դրանց արտադրողականությունը 2016 թվականից աճել է 184 %-ով, ապա՝ Թուրքիան (164 %), Չինաստանը և Ճապոնիան (120-ական %):

Սիրակուզի համալսարանի (ՄՍՆ) պրոֆեսոր Սեն Վան Էյ-ը սալորի մի ծառի պատվաստել է սալորի 40 տեսակի ճյուղ: Քանի որ յուրաքանչյուր տեսակ ծաղկում և պտղաբերում է իր ժամանակին, մինչև ուշ աշուն ծառը զարդարված է լինում ծաղիկներով և բազմերանգ պտուղներով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով ներկայում աշխարհում 450 մլն մարդ տառապում է հոգեկան կամ նյարդաբանական խանգարումներից, իսկ մարդկության 48 %-ի համար անհասանելի են ախտորոշման այնպիսի տարրական գործողություններ, ինչպիսիք են արյան ընդհանուր հետազոտությունը և ռենտգենը:

Իսպանացի ճարտարագետ Խոսե Մարիանո Լոպես-Ուրդիալեսն առաջարկում է ոչ շատ ծանր արբանյակները (մինչև 75 կգ) հեռարձակել ոչ թե երկրից, այլ օդապարիկից, որը հրթիռը և արբանյակը բարձրացնում է 20 կմ: Այդ դեպքում ներքևում է մնում հետագծի ամենադժվար հատվածը, երկրային մթնոլորտի 99 %-ը: Առաջին փորձերը հուսադրող արդյունք են տվել:

Վենսաբանների գնահատմամբ երկրային օրգանիզմների ԴՆԹ-ների ընդհանուր զանգվածը 50 միլիարդ տոննա է:

Ըստ հարցումների արդյունքների՝ 2020 թ. այն ամերիկացիների թիվը, որոնք համարում են, որ Դարվինի էվոլյուցիայի տեսությունը ճիշտ է, առաջին անգամ գերազանցել է այն ժխտողների թիվը 52:36 % հաշվով: Մնացածները դեռևս տատանվում են:

Օսմերիկացի աստղագետների խումբը կարողացել է գնահատել Ծիր կաթին գալակտիկայի զանգվածը, որտեղ մենք ապրում ենք: Այն կազմում է 1-1,2 տրիլիոն Արեգակի զանգված: Գնահատումը կատարվել է ըստ հարևան փոքր գալակտիկաների շարժման չափանիշների:

* «Գիտության աշխարհում», 2023 թ., № 2

ԶԱՅՆ ՄԵԾԱՅ

Լեզուն ամենավտանգավոր զենքն է. թրի հասցրած վերքն ավելի հեշտ է ապաքինվում, քան խոսքի:

ԿԱԼԴԵՐՈՆ

Լեզուդ մի՛ հանձնիր չկշռադատված մտքերին և ոչ մի չկշռադատված միտք մի՛ իրագործիր:

ՇԵՔՍՊԻՐ

Մարդը որքան էլ լավ խոսի, հիշե՛ք. երբ նա չափից դուրս շատ է խոսում, ապա վերջիվերջո հիմարություն կասի:

ԴՅՈՒՍԱ-հայր

Մարդը պարզ է արտահայտվում, երբ միտքը տիրապետում է նրան, բայց էլ ավելի պարզ, երբ նա տիրապետում է մտքին:

ԲԵԼԻՆՍԿԻ

Լավ խելք ունենալը քիչ է, գլխավորը այն լավ օգտագործելն է:

ԴԵԿԱՐՏ

Բոլոր մարդիկ զանգատվում են իրենց հիշողության անբավարարությունից, բայց դեռ ոչ ոք չի զանգատվել առողջ մտքի պակասությունից:

ԼԱՐՈՇՖՈՒԿՈ

Այն մարդը, ով չի կարողանում ինքն իրեն կառավարել, պիտանի չէ ուրիշներին կառավարելու համար:

ՊԵՆՆ

Մարդ միայն այն դեպքում է որևէ բանի հասնում, երբ հավատում է իր ուժերին:

ՖՈՅԵՐԲԱԽ

Նա, ով կարողանում է շողորթորել, կարողանում է նաև զրպարտել:

ՆԱՊՈԼԵՈՆ I

Գևորգ Երվանդի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Կյանքից հեռացավ հայկական գիտության ու կրթության երախտավոր, հասարակական գործիչ, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ, Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Երվանդի Բաղդասարյանը:

Գևորգ Բաղդասարյանն այն եզակիներից էր, ով օժտված էր ոչ միայն վառ ու բազմակողմանի տաղանդով, այլև մարդկային կարևոր առաքինություններով: Նրա ամուսնացած կյանքում ու մեծ ներդրումը գնահատված են թե՛ պետության, թե՛ մասնագիտական համրության կողմից: Մեծ մարդն ու գիտնականը վայելում էր ոչ միայն իր գործընկերների, այլև շատերի հարգանքն ու համակրանքը: Նա հայաստանյան գիտության հենասյուներից էր, ով հսկայական ներդրում է ունեցել այդ ոլորտում:

Գևորգ Երվանդի Բաղդասարյանը ծնվել է 1936 թ. հունվարի 13-ին Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Ապարան քաղաքի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1953 թ.: Այնուհետև ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, որն ավարտել է 1958 թ.-ին գերազանցության դիպլոմով:

1958-64 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում որպես գիտաշխատող: 1964 թ. նրան շնորհվել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1964-79 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: 1979-88 թթ. ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի մագնիսառածգականության բաժնի վարիչն էր:

1977 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Բարակ սալերի և թաղանթների մագնիսառածգականության խնդիրներ» թեմայով՝ ստանալով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1986-87 թթ. ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենն էր: 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1994թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս:

1983 թ.-ից ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր էր: 1988-2001 թթ. եղել է նշված ամբիոնի վարիչը, իսկ 1993-95 թթ.՝ ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ղեկավարն էր:

Գ. Բաղդասարյանը 1994-98 թթ. աշխատել է որպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, 1998-2002 թթ.: ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ, ԵՊՀ ռեկտորի խորհրդական (2002-2007 թթ.): 2007 թ.-ից նա ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող էր:

Մի շարք հանդեսների խմբագրական կոլեգիաների և գիտական խորհուրդների անդամ էր:

Գ. Ե. Բաղդասարյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների, ինչպես նաև հրատարակել է 6 մենագրություն, այդ թվում՝ նաև անգլերեն: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են շուրջ երկու տասնյակ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Անուստակալի է գիտնական-մտավորականի ավանդը մեխանիկայի բնագավառի տարբեր ոլորտներում իրականացված հետազոտական աշխատանքներում, որոնց բազմաթիվ կարևորագույն արդյունքներ բազմիցս ներկայացվել են միջազգային գիտական համրության ուշադրությանը և արժանացել բարձր գնահատականի:

Գ. Ե. Բաղդասարյանն առաջնեկն է հայրենական գիտական աշխարհում գազի գերծայնային հոսանքով շրջապատվող բարակապատ մարմինների կայունության (ֆլատեր) հարցերի ուսումնասիրության բնագավառում: Նրա ջանքերի շնորհիվ ֆլատերի խնդիրները դարձան գիտական համրության ուսումնասիրության առարկան, և այդ ուղղությունը Հայաստանում մեծ զարգացում ստացավ: Նա իր աշխատանքներում ուսումնասիրել է նաև բարակապատ մարմինների տատանումներն ու կայունությունը, ալիքային պրոցեսները և ճաքեր պարունակող մարմինների լարվածադեֆորմացիոն վիճակները, ստացել է մի շարք կարևորագույն արդյունքներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ե. Բաղդասարյանը «Բարակ մարմինների էլեկտրամագնիսական մեխանիկա» գիտական ուղղության հիմնադիրներից է, գիտական դպրոցի ղեկավար, միջազգայնորեն ճանաչված մասնագետ:

Գիտության մեջ ունեցած նշանակալի ավանդի համար ակադեմիկոս Գևորգ Բաղդասարյանն արժանացել է բազմաթիվ մեդալների և պարգևների, որոնցից են՝ ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ մաթագահի մրցանակ, ՀՀ վարչապետի ոսկե մեդալ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե և Խ. Աբովյանի անվան ոսկե մեդալ, ՀՀ ԳԱԱ «Վաստակագիր»:

Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կոլեկտիվը սգում է ակադեմիկոս Գևորգ Բաղդասարյանի մահը և ցավակցում նրա հարազատներին, բարեկամներին ու գործընկերներին:

Բարի հիշատակ ակադեմիկոս Գևորգ Բաղդասարյանին:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն,
Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների
բաժանմունք,
Մեխանիկայի ինստիտուտ**

Ռուս նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, գրաքննադատ և պատմաբան Վալերի Բրյուսովը (1873-1924), Մոսկվայի Հայկական կոմիտեի հանձնախմբի խնդրանքով 1915 թ. կեսերից ծեռնամուխ լինելով «Հայաստանի պոեզիան» ժողովածուն կազմելու և խմբագրելու աշխատանքներին, դրան զուգընթաց լայն գործունեություն է ծավալել հայ գրականությունը, մշակույթը, պատմությունը ռուս և հայ հասարակայնության մեջ տարածելու ուղղությամբ: Այդ նպատակով 1915-1917 թթ. նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել ոչ միայն Մոսկվայում, Պետրոգրադում, այլև Բաքվում, Թիֆլիսում, Եջմիածնում ու Երևանում:

Հայ գրասերների ընկերության խորհրդի հրավերով 1916 թ. հունվարի 7-ին Վ. Բրյուսովը ժամանում է Բաքու: Հունվարի 8-ին Մայիլյանների լեփ-լեցուն թատրոնում նա հանդես է գալիս «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով դասախոսությամբ: Այնուհետև հունվարի 13-ին Հայ գրողների կով-



1917 թ. հունվարին կրկին Հայ գրասերների ընկերության խորհրդի հրավերով Վ. Բրյուսովը երկրորդ անգամ է ժամանում Անդրկովկաս՝ Բաքու: Հունվարի 19-ին Թաղիկի թատրոնում նա հանդես է գալիս «Էմիլ Վերհար-նը և հերոսական Բելգիան» վերնագրով դասախոսությամբ, հունվարի 24-ին դարձյալ նույն թատրոնում՝ «Ուսուցիչների ուսուցիչները» (մարդկության հնագույն մշակույթների մասին)՝ վերնագրով դասախոսությամբ: Հունվարի 29-ին ռուս բանաստեղծը Հասարակական ժողովարանի դահլիճում դասախոսություն է կարդում Ա. Ս. Պուշկինի հասարակական հայացքների վերաբերյալ՝ նրա մահվան 80-ամյակի առթիվ: Այդ օրերին Վ. Բրյուսովը լայնորեն շփվում է Բաքվի հայ հասարակայնության տարբեր շերտերի հետ: Նախատեսված ուղևորությունը Թիֆլիս ինչ-ինչ համաճանաչների պատճառով տեղի չի ունենում, և հունվարի վերջին նա

ԱՆՄՆԱՅՈՐԴ ՆՎԻՐՈՒՄ

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԾՆՆՂՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

կայան ընկերության հրավերով նույն դասախոսությամբ հանդես է գալիս Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում, հունվարի 17-ին՝ Եջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցչական դահլիճում, հունվարի 18-ին՝ Երևանի քաղաքային ակումբի դահլիճում: Վերադառնալով Թիֆլիս՝ ռուս բանաստեղծը հունվարի 22-ին «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով դասախոսություն է կարդում Արտիստական ընկերության դահլիճում: Հունվարի 24-ին նա մեկնում է Մոսկվա:

Վ. Բրյուսովի դասախոսությունները ոչ միայն հայ, այլև ռուս ժողովրդի մշակութային, հասարակական-քաղաքական կյանքում կարևորագույն իրադարձություններ էին և արժանացան ջերմ ընդունելության: Անդրկովկասում նա շփվում է հայ գրական-հասարակական ամենալայն խավերի հետ, ծանոթանում բազմաթիվ գործիչների, մասնավորապես Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Գարեգին Հովսեփյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Սրբուհի Լիսիցյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Ջորյանի և այլոց հետ: Դա հնարավորություն է տալիս Վ. Բրյուսովին ճշգրտելու իր գնահատականները հայ գրականության, պատմության այս կամ այն երևույթի մասին:

1916 թ. հուլիսի սկզբին Մոսկվայում Վ. Բրյուսովի խմբագրությամբ լույս է տեսնում «Հայաստանի պոեզիան» ժողովածուն, որը վաճառքի է հանվում օգոստոսի 15-ից հետո: Դրա նախածեռնողը, ինչպես նշվեց, Մոսկվայի Հայկական կոմիտեն էր՝ ի դեմս գրական-մշակութային հայտնի գործիչներ Կ. Միքայելյանի, Պ. Մակիմցյանի, Վ. Տերյանի, Կ. Կուսիկյանի և Ա. Ծատուրյանի: Բացի Վ. Բրյուսովից, թարգմանիչներն էին ռուս նշանավոր բանաստեղծներ Ա. Բլոկը, Ի. Բունինը, Վ. Իվանովը, Ֆ. Սոլոգուբը, Կ. Բալմոնտը և ուրիշներ: Ժողովածուն դարձավ յուրօրինակ հուշակոթող Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Անվանի գիտնականը Երևանում ներկայացրեց իր նոր գիրքը

Վերջերս Երևանում ռուսաստանագրական անվանի գիտնական, բյուրեղագետ, քիմիկոս, նյութագետ Արտեմ Օհանովը ներկայացրեց իր նոր՝ «Քիմիան Արտեմ Օհանովի հետ» գիրքը: Հանդիպումը վարեց ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը:

«Ես վարում եմ այս հանդիպումը, որովհետև պատիվ ունեմ լինել Արտեմ Օհանովի ընկերը: Ես երբեք չեմ համոզվել ավելի էնոցիոնալ ինտելեկտուալի, քան Արտեմ Օհանովն է: Ավագ սերնդից ես նրան կհամեմատեի ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանի հետ: Արտեմը հրաշալի ու պարզ բացատրում է գիտության ամենաբարդ խնդիրները: Արտեմը նոր լիցք է տվել բյուրեղային քիմիային: 2006 թվականին նա ստեղծեց բյուրեղային կառուցվածքների համակարգչային կամխատեման «USPEX» ծրագիրը: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է նոր միացություն՝ բորոֆեն, որը գրաֆենի ձևափոխված տարբերակն է, ածխաթթվի փոխարեն պարունակում է բոր: Իր կողմից կամխատեմված միա-



ցությունները բացահայտվել են նույնիսկ այլ մոլորակների վրա»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:

ՀՀ ԳԱԱ Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանն իր ելույթում նշեց. «Սա յուրահատուկ գիրք է՝ հետաքրքիր օրինակներով լի: Այստեղ տեղին է մեջբերել մեծ ֆիզիկոս Ալբերտ Էյնշտեյնի խոսքերը. «Ամեն ինչ պետք է ներկայացվի այնքան պարզ, որքան հնարավոր է, բայց ոչ ավելին»: Հենց այս սկզբունքն է հետևել գրքի հեղինակ Արտեմ Օհանովը: Բացի այդ, գիրքն առանձնանում է քիմիայի հիմունքների և սկզբունքների յուրօրինակ համարահռչակմամբ և մատուցման գիտական խստությամբ»:

Հանդիպումն անցավ հարցուպատասխանի ձևաչափով, որին ակտիվորեն մասնակցում էին և՛ պրոֆեսորներ, և՛ երիտասարդներ, և՛ դպրոցականներ:

Արտեմ Օհանովը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի, Սկոլովոլոյի գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի, Մոսկվայի ազգային հետազոտական տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր է, Քիմիայի Թագավորական և Ամերիկյան ֆիզիկական ընկերությունների իսկական անդամ: 2008-2017 թթ.-ին նա եղել է Նյու Յորքի Սթոուն Բրուքի համալսարանի Նյութերի համակարգչային դիզայնի լաբորատորիայի ղեկավար: Ավելի քան 300 գիտական աշխատանքների հեղինակ է, Հիրշի ինդեքսը՝ 86:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀ ԳԱԱ-ն հայտարարում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակի» հայցման 2023 թվականի հայտերի մրցույթ

ՀՀ ԳԱԱ մրցանակ շնորհվում է հետևյալ բնագավառներում՝

○ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ (երկու անվանակարգ՝ հիմնարար հետազոտություններ և կիրառական մշակումներ),

○ քիմիա, կյանքի և երկրի մասին գիտություններ (երկու անվանակարգ՝ հիմնարար հետազոտություններ և կիրառական մշակումներ),

○ հասարակական և հումանիտար գիտություններ (մեկ անվանակարգ):

Հիմնարար հետազոտությունների ոլորտում ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է վերջին 5 տարիների ընթացքում ձեռք բերված կարևորագույն հիմնարար գիտական արդյունքների, արժեքավոր գործի, հայտնագործության կամ աշխատանքների շարքի համար: Կիրառական մշակումների դեպքում ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է վերջին 10 տարիների ընթացքում ստացված գիտատեխնոլոգիական կամ գիտաարտադրական արդյունքների, ապրանքայնացման պատրաստ կամ ներդրված կիրառական մշակումների համար:

Մրցանակը շնորհվում է համանուն վկայագրի և դրամական պարգևի ձևով: Յուրաքանչյուր մրցանակի դրամական պարգևի չափը կազմում է 5000000 ՀՀ դրամ: Մրցանակաբաշխությունն իրականացվում է «ՄԱՐՏԻՆ ՍՈՒՐ» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ: Մեկ անգամ մրցանակ ստացած անձն իրավունք չունի երկրորդ անգամ հավակնել այն ստանալու: Հայտը չպետք է պարունակի արդյունքներ, որոնց համար հեղինակները կամ այլ անձինք արդեն ստացել են ՀՀ ԳԱԱ մրցանակ, կամ դրանք վերջին 5 տարիների ընթացքում արժանացել են ՀՀ որևէ այլ պարգևի՝ ՀՀ Նախագահի մրցանակ, ՀՀ պետական մրցանակ, ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակ և այլն:

ՀՀ ԳԱԱ մրցանակի հայտեր կարող են ներկայացնել ՀՀ գիտական, գիտակրթական, գիտաարտադրական կազմակերպությունների աշխատակիցները կամ դրանց խմբերը՝ կազմակերպության ղեկավարի կամ գիտական խորհրդի երաշխավորությամբ: Խմբերի կազմում կարող են ներգրավվել նաև տվյալ հայտի շրջանակում համատեղ աշխատանքներ իրականացրած օտարերկրյա գիտնականները: Ներկայացնող կազմակերպությունը յուրաքանչյուր անվանակարգում կարող է առաջադրել միայն 1 աշխատանք:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը համալրելու համար

Գործադիր մարմնի պաշտոնի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող, կազմակերպության մասնագիտական ուղղվածությունը (ուղղություններից մեկին) համապատասխան գիտական աստիճան ունեցող, գիտակազմակերպական փորձ ունեցող, 65 տարին չլրացած անձը:

Հավակնորդը պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնի թափուր հաստիքի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է՝

1) լրացված դիմում, որտեղ նշվում են առնվազն հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց իսկությունը և հասանելիությունը ստուգվում են անմիջապես,

2) ինքնակենսագրություն,

3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

4) 2 զուևավոր լուսանկար՝ 3x4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը),

6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝

ՀՀ ԳԱԱ 2023 թ. մրցանակի մրցույթին պետք է ներկայացվեն հիմնարար հետազոտությունների՝ 2018-2023 թթ. և կիրառական մշակումների՝ 2013-2023 թթ. ընթացքում ձեռք բերված արդյունքները:

Հայտերի գնահատման ժամանակ հաշվի են առնվելու՝

○ հիմնարար հետազոտությունների դեպքում՝ գիտական աշխատանքի կամ շարքի գիտական ազդեցությունը, արդիականությունը, նորությունը, գիտական նոր ուսումնասիրություններ կամ ուղղություններ խթանելու հնարավորությունը, տվյալ գիտական ուղղությունից դուրս ազդեցության մակարդակը, գիտական համագործակցությունը խթանելու աստիճանը, հեղինակների ներդրումը, աշխատանքի ընդհանուր նկարագիրը,

○ կիրառական մշակութային գիտատեխնոլոգիական/գիտաարտադրական մշակումների դեպքում՝ գիտական ազդեցությունը, նորությունը, լաբորատոր, փորձնական մոդելների, արդյունաբերական կամ սերիական արտադրության առկայությունը, պետական պատվերով կատարումը կամ տեղական/միջազգային շուկաներում վաճառքը, հաստատված լաբորատոր կամ արտադրական գիտատեխնիկական փաստաթղթերը, արտոնագրերը, առկա պահանջարկը՝ համագործակցության կամ պայմանագրային արտադրության համաձայնագրեր, առջուվաճառքի պայմանագրեր:

Մրցույթի փաստաթղթերի ներկայացման ժամկետը 2023 թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 25-ն է: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն 2024 թվականի մարտի երրորդ տասնօրյակում: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2024 թ. ապրիլին՝ ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովի ժամանակ:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

- դիմում-հայտ, իսկ համահեղինակության դեպքում՝ նաև մասնակցության համար համահեղինակների համաձայնությունը (լրացվում է առցանց («online»)) եղանակով),
- հեղինակ(ներ)ի անձնագր(եր)ի և սոցիալական քարտ(եր)ի պատճենները,
- հեղինակ(ներ)ի բանկային անձնական հաշվեհամար(ներ)ը,
- հեղինակ(ներ)ի կենսագրական տվյալները («resume/CV»),
- աշխատանքը ներկայացնող կազմակերպության ղեկավարի կամ գիտական խորհրդի որոշումը՝ աշխատանքը մրցույթին ներկայացնելու արժանության վերաբերյալ,
- հեղինակ(ներ)ի՝

○ վերջին 5 (հինգ) տարիների (2018-2023 թթ.) ընթացքում

քում հրապարակված աշխատանքների ցանկը՝ հիմնարար հետազոտությունների դեպքում,

○ վերջին 10 (տասը) տարիների (2013-2023 թթ.) ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկը և գիտատեխնոլոգիական և/կամ գիտաարտադրական արդյունքների ապրանքայնացման մակարդակը հիմնավորող փաստաթղթերը՝ արտոնագրեր, կանոնակարգեր, շուկայական պահանջարկը հիմնավորող փաստաթղթեր, իրացման պայմանագրեր և այլն՝ կիրառական մշակութային գիտատեխնոլոգիական/գիտաարտադրական մշակումների դեպքում,

7. երեք երաշխավորագիր (կարծիք)՝ աշխատանքը մրցանակի արժանի լինելու վերաբերյալ՝ տրված տվյալ ոլորտի մասնագետների կողմից (նրանցից առնվազն մեկը պետք է լինի օտարերկրյա մասնագետ),

8. մրցույթին ներկայացվող աշխատանքի ընդհանուր նկարագիրը՝ մինչև 5 (հինգ) էջի սահմաններում՝ հայերեն և անգլերեն,

9. մրցույթին ներկայացվող աշխատանքը:

Մրցույթի փաստաթղթերի ներկայացման ընթացակարգը՝

○ հայտատուն պետք է առցանց («online»)) լրացնի դիմում-հայտը հետևյալ հղումով՝ <https://forms.gle/BPR4CJECpfbyZTmq5> (դիմում-հայտն ուղարկելուց առաջ անպայման հարկավոր է այն տպել և ստորագրել),

○ հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված ստորագրված փաստաթղթերի ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակները,

○ փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները հարկավոր է ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ sciorgdep@sci.am՝ նամակի «Subject» դաշտում նշելով մրցույթի անվանումը,

○ եթե ներկայացվող աշխատանքը կատարված է համահեղինակությամբ, դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որը կարտացույցի համահեղինակների մասնակցության չափը և ստորագրված կլինի համահեղինակների կողմից,

○ առցանց («online»)) լրացված դիմում-հայտը տպված և ստորագրված, ինչպես նաև ներկայացվող փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված փաստաթղթերի բնօրինակները ստորագրված և կնքված հարկավոր է ներկայացնել ՀՀ ԳԱԱ նախագահության գիտակազմակերպական բաժին հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ.՝ 010 58-36-79 (1-99), 010 56-81-83 (1-36):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատողի թափուր տեղի համար (0,5 հաստիք)

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Ամիրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ ա) դիմում, բ) լուսանկար, գ) քաղվածք աշխատանքային գրքույկից, դ) ինքնակենսագրություն, ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը, է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ը) տեղեկանք մշտական բնակության վայրից, թ) հրատարակված աշխատանքների ցանկ, ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում), ժա) բնութագիր վերջին աշխատավայրից: Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ անմալ ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 22.11.2023 թ.:

"ГІТУТІОН" ("Hayka") gazeta HAH PA